Չահ լապտերաց՝ զնովաւ՝ վա	ռին.
Ինքնին շրջի՝ գունտ աշխար	հին,
հաստատելովն՝ ՚ի վրա	նին.
Ազգք և ազինք՝ ամենե	քին,
շրջաբերին՝ շուրջ զնո	վին.
"Տէր և իշխան՝ եղեն յերկ	րին,
առ կենդանեօքն՝ ազգ մարդկայ	ին.
Որովք համայն՝ կառավա	րին,
րստ իւրաքանչիւր՝ յիւրում կար	գին.
"Ոմանք իշխանք՝ տեարք յաշխար	հին,
ոմանք ՚ի խոր՝ գերի վա	րին.
Ոմանք փառօք՝ պսակե	ին,
ոմանք արկեալ՝ ընդ հարկօք նո	յին.
Ոմանք իշխեն՝ յանձնէ ինք	նին.
ոմանք իշխեն՝ յահէ նո	յին.
Ոմանք յաղթօղք՝ եղեն յերկ	րին,
	ոմանք



Ոմանք զբօսնուն՝ ՚ի պարտի  
 ոմանք յերկրի՝ գուր վաստա  
 Ոմանք ՚ի գիր՝ յաստուճած կըր  
 ոմանք արբեալք՝ ընդ քնով թըմ  
 Ոմ հաճատոյ՝ բանիւ վար  
 ոմն մոլի՝ մարմնով պըղ  
 Ոմանք գովին՝ փառաւնո  
 ոմանք բանիւ՝ յոյժ պարսա  
 Ոմանք փարթամք՝ յոյժ լիա  
 ոմանք կարօտք՝ չքաւնո  
 Ոմանք նորոգ՝ յերկրի ծը  
 ոմանք ելին՝ ՚ի մէնջ մե  
 Մի՛ հաճատար՝ սուտ կենցա  
 ՝մահն տիրէ՝ հանկարծ մար  
 Աւաղ անձինս՝ չար եղկել  
 թշուառացեալ՝ իմում հոգ  
 Ջիւրդ կայցես՝ տեառն առա  
 յաւուրն ասեղ՝ դատաստա  
 Ընկալ զիս տէր՝ յոյս իմ բա  
 թող զյանցանս՝ իմ վշտա

զին  
 կին  
 թին  
 ըին  
 ժեայ  
 ձեալ  
 ըեալ  
 շեալ  
 ըեալ  
 նեալ  
 ոեալ  
 ղոյս  
 ոյս  
 ւոյս  
 ւոյս  
 ջի  
 նի  
 ըի  
 լի

Նորին աստ ոմէնէ Ժեբ Լ արմէ Ե

**Յ**իմար է այրն՝ որ յաշխար  
 չ անցաւ որիս՝ յուսով քե  
 Քնդ ունայնութիս՝ զուր վաստա  
 մերէ յաշխարհէս՝ ելքն եղի  
 Ալեօք ծաղկեալդ՝ զերթ պատա  
 զուր դեգերիս՝ դու յաշխար  
 Ո՛չ նշմարես՝ զօր քո վեր  
 որ մերձ եղև՝ քո առա  
 Բոտին եղեալդ՝ լի ամենայ  
 ո՛չ յագեցար ընչիւք երկ  
 Մի աշխատիր՝ յոյժ աւե  
 զի մի նովին՝ չար քեզ Տաս  
 Ունայն է կեանքս՝ այս աշխար  
 չ ունայնութի՛ միշտ եղի  
 Այլ ջանացիր՝ վաղվաղա  
 քեզ կատարել՝ զուխտ քո բա  
 Ի իւսեալդ հոգւով՝ չ հոգս աշխար  
 ո՛չ յագեցար՝ բնաւ՝ իմարմ  
 Թէ քեզ տային՝ գանձք աշխար  
 յոյժ ընդ ունայն՝ քեզ եղի  
 Թէ գո՛հ լիցիս՝ իբուամ սրբ  
 կալցես հանգիստ՝ դու յաշխար  
 Բարւո՛ք է գո՛հ՝ լինիլ յերկ

Տի  
 ըն  
 կի  
 ցի  
 նի  
 Տի  
 ջե  
 ջե  
 նի  
 ըն  
 լի  
 ցի  
 Տի  
 ցի  
 կի  
 ըն  
 Տի  
 նի  
 Տի  
 ցի  
 տի  
 Տի  
 ըն  
 բարե

բարեպաշտից՝ գործս համա  
 իսկ թէ ես զուրկ՝ իբուժմարմ  
 բայց դու զերծեալ՝ զբաղմանց երկ  
 Հրաման վէհին՝ մինչ հասա  
 մահն տիրէ՝ վաղվաղա  
 Իւրաքանչիւր՝ յանձանց ան  
 կեանք մարդկային՝ ի բայ բարձ  
 Փառս մատո՛ք բուժարար  
 մինչ՝ ի մարմնի՝ ես կենդա  
 Նա որ ելցէ՝ գործով բա  
 արքայութեն՝ արժանաս  
 Բանքս այս յինէն՝ քեզ եղի  
 Իբր՝ ի ժանգոյ՝ մաքուր ոս

բի  
 նի  
 բի  
 նի  
 կի  
 տի  
 ցի  
 չի  
 նի  
 բի  
 ցի  
 ցի  
 կի



Ս. ՆԵՐՍԵՍ ԵՆՈՐԱՆԻ

ԿՐԱԴԱՐԱՆ

Ս. ԱՆՈՆԱԿՐԻԿԻ ՎԱՅԷ

ՆՈՐ ԶԱՊԱ

ԽԱՍԻՄ



Խոստովանաւն տագաւալ անջին. շոք արտ է  
 քրեաքանէց շերտաճէլ՝ Ե արտի շգործէյեալ Երշ  
 Իւրեանց, և Խոստովանել ասաւջի փահանայեց. որդ  
 և գրանել զԵրշաւն յանցանայ Իւրեանց: Հանա  
 քեալ՝ Ծարաւն Եօանհանէան ՚ի նոր ջաշայեցայ  
 աղանարեանց Կուչեյէլոյ:

**ՄԵ** եղայ այ, մեղայ այ, մեղայ այ,  
 մեղայ ամենասք երբորդուք  
 Հօր և Որդւոյ և Հոգւոյն սք. մեղուցել  
 եմ այ, Խոստովանիմ առաջի այ, և սրբու  
 Հոյ Ծածմիւն, և առաջի ամ սրբոյ, և ՚ի  
 մ. ջ

մէջ սք եկղեցւոյս, և առաջի քո հայր սք,  
 զամ մեղս զոր գործեալ եմ: քանզի մեղայ,  
 խորհրդով բանիւ և գործով. կամայ և  
 յակամայ, գիտութիւն և անգիտութիւն, մեղայ  
 աստուծոյ:

Գլխովս մեղուցեալեմ, հայր սք, հայր-  
 տութիւն, ամբարատաւանութիւն, փառասիրութիւն  
 և կեղծանորութիւն. և իմտանելս յեկեղեցի  
 սք, լէ դէմ տաճարի խաչի աւետարանի  
 և սքութիւն յերկիր ոչ պագի. և կամ թէ  
 երկիրպագի ոչ խոնարհութիւն և ջերմե-  
 ուանդութիւն. այլ և փքայայ լէ դէմայ, և  
 ամ սքց նորին. և զամ պատուիրանս նորա  
 խտեցի. երկբայեցայ յողորմութիւն նորին.  
 և յուսահատեցայ ՚ի թողութիւն մեղայ,  
 երեցուցի զիս առաքինի, որ ոչ էի. պար-  
 ծեցայ թէ արարի ինչ բարի: որ ոչ էի արա-  
 ըլ փքայայ յաղօթս, ՚ի պահս, յարտասուս  
 և յողորմութիւն. յորոյ դատարկ և ունայն  
 էի. ոչ հնազանդեցայ խրատուց հոգևոր  
 և մարմնաւոր տերանց ծնողաց ազգականաց  
 սիրելեաց և բարեկամաց իմոց. զոր պարտ  
 էի սիրով ընդունել. այլ բարկութիւն շար-  
 թելով զգլուխս ՚ի վր նոցին: Արարի երես  
 սրշտութիւն այլոց: զի այնու վնասել զնո-  
 սին

սին. ցանկացայ անպատէՏ 'ի վրէժխնդրո.  
 Թի ընկերին, որով Տեղի զգառնութի  
 Թիւնից իմոց 'ի վր նորին: Ստացայ զան.  
 կարգ փառասիրութի, պատիւ և զմեծութի  
 Տեշտացայ սուտ բանից և փառաց աշխար.  
 Տի որով բարկացուցի զամբ բարձրեալն  
 'ի վր իմ, մեղայ: Թյ.

Աջօքս մեղուցեալեմ, արատ հայելով է  
 տես գեղեցիկ կերպարանայ այլոց, արանց  
 և կանանց, կենդանեայ և անկենդան պատ.  
 կերայ, նաև յոսկի յարծաթ. և յայլ ու.  
 տելոյ և ըմպելոյ յիրս, և 'ի փառս աշխար.  
 Տի որոց հայելս՝ ցանկացայ 'ի սրտի իմում  
 ջեռան մարմին իմ և զօրացան յիս տա.  
 փումն չար ցանկութե մեղայ իմոց: մեղայ  
 աստուծոյ:

Ականջօքս մեղուցեալեմ, Տեշտացայ ամ  
 չար բնից, զրուցատրուէց, առասպելաբա,  
 նուէց, ստախօսուէց, բամբասանայ, շոգմո  
 գութեց, բանասարկութեց և ամ չարութեց  
 խոնարհեցուցանել զնա. իսկ յանձային  
 պատուիրանս, 'իսք գրոց. և յաւիտենական  
 ընթերցմունս. 'ի պատարագի և 'ի ժամեր.  
 գութե, յալօթս և 'ի պաշտամունս Թյ. և կամ  
 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր ճնորայ խրա.  
 տոց

տուցի զոր արարտ էի խոնր հեցուցանել խցի  
 զնա ը դէմ նոցին. որով լցայ ամ չարութ  
 և բազմադիմի ամբար շտութի մեղայ անց :  
 Բերանովս մեղուցեալ եմ յակամայ ուտե-  
 լով և ընկելով, խճեցի զորովայն իմ  
 և յագեցայ արբեցութեամբ յիսարական  
 գինեաւն, խնդրեցի և պատրաստեցի յոյժ  
 անուշահամ խորտիկս, և զանազան կերա-  
 կուրս, զանազան դեղօք, պէսպէս հա-  
 մովք, և բազում ծախիւք, և յագեցայ  
 ցանկութի գեր քան զչափն, նախ քան զճաշա-  
 կելս և յետ նորին թարց օրհնութե և գոհա-  
 նալոյ զտնէ անցի Ս.Ս. և ձանձրացայ ի մեջ  
 եկեղէցւոյ և յարտաքոյ նորին՝ յաղօթս,  
 ի պահս, ի ժամերգութիս և ի փառաբանու-  
 թիս ամային: Ո՛չ աղօթեցի վն սիրելէց և  
 թշնամեաց իմոց, և ո՛չ վն այլոց ամենեցուն.  
 այլ հանապազ սուտ ասելով բամբասելով  
 զրպարտելով լրբաբար ծիծաղելով, զճա-  
 ճուկս այլոց յայտնելով և զբարիս նոցին  
 չարաչար մեկնելով. կատակ և ծաղր առնե-  
 լով զայլս, առ ի ամաչեցուցանել զնոսա  
 առաջի այլոց, նաև ամ դատարկ և ունայն  
 բանի սուտ և անպատեհ երդմնելով, և  
 յերդումն տալով ի քն յամօ և յամ սքս  
 նորին

նորին: Այլ և լրբաբար հայհոյելով  
զհայր և զմայր, զհեռաւոր և զմերձաւոր,  
զլնտանի և զօտարականս զհարուստ և  
ուամիկ, զազատ և զծառայօ զմեծ և զփոք,  
և զայլ ամ ոք. մեղայ ասյ:

Լեզունաւ մեղուցեալ եմ, լեզուս սուր  
յօրինելով ի դէմ ծնողաց, եղբրց, սիրե-  
լնց և բարեկամաց իմոց զսիրտան խոցտե-  
լով, սուտ ասելով, դատարկ և աղտեղի  
խօսելով, բամբասելով, և վայրապար  
հայհայելով, և թարց իմիք պատճառանայ  
զանպարտան զրպարտելով մեղայ ասյ:

Ընդամբս մեղուցեալ եմ, ամ կերակրեց  
և ըմպեւեաց, զանազան ծաղկանց և ամ  
չար տեսակ հոտոտեւեաց մերձեւալով ՚ի  
նոսին. մեղայ ասյ:

Ձեռօքս մեղուցեալեմ, գողանալով կու-  
ղուպտելով զրկելով հարկանելով սպա-  
նանելով և ընդ գարշաձեւելով յա-  
փշտակեցի զինչս այլոց, զարկի զնոսա  
ձեռամբ և գաւազանաւ, տալով նոցին  
զհայհոյութիւնս առ ՚ի զայրացուցանելոյ  
զսիրտս նոցին. գնացի ՚ի խաղս, և շահեցայ  
խորամանկութեւ, ՚ի չափում, և ՚ի կշռոջ և  
՚ի հաշունագրութեւ՝ աւելի առնելով և  
պակաս

պահաս տալով. ի վաճառականութե կարգ  
գեալ զբաժն և զմաքսն՝ ո՛չ ետու լը իրա-  
ւանց և արդարութե. յապաղեցայ Տատու-  
ցանել զպարտա իմում ծնողայ, և այլոց  
ամենեցուն, զոր յառաջագոյն խոստացեալ  
էի վճարել. այլ և ո՛չ ողորմելով յաղքատս,  
և ո՛չ գթալով ի տնանկս, ՚ի քաղցեալս և ՚ի  
ճարաւեալս, ՚ի մերկս՝ և ՚ի հիւանդս ՚ի կա-  
պեալս և ՚ի բանտարկեալս, և յայլ սոյն-  
պիսիս, այլ կտի և լրբաբար շօշափելով  
զայլս, գիրկս առեալ Տամբուրմամբ առ  
՚ի յորդորել զնս՝ ՚ի մեղս, որով եղէ Տա-  
կառակ ամ պատու իրանայն այ մեղայ այս  
նտիւքս մեղուցեւ եմ, մշտապէս առ չար  
ճանապարհ ընթանալով, և յամ չարիս դի-  
մելով, և ո՛չ գնալով ՚ի սք եկեղեցիս, և ո՛չ  
ծնրադրութք աղօթելով առ ամ. ո՛չ գնա-  
լով ՚ի տես հիւանդայ, և ո՛չ ՚ի տունս սգա-  
ւորայ առ ՚ի միսիթարել զնոսինս մեղայ այս  
Սրտովս մեղուցեալ եմ, ամբարտաւանու-  
թք, խորամանկութք, հեռ՝ նախաճճ՝  
բարկութիւն և զամ ոխ և կնճիւռն անիրա-  
ւութե ՚ի սրտի իմում բարդելով. սիրտ իմ  
ո՛չ ուղղելով առ ամ այլ Տանապաղ զչարիս  
խորհելով, և լը կամայ չարին հետեւ-  
լով

լով. այլ և խոտորեցուցանելով զսիրտ իմ  
 'ի պաղատանս անհաւատից հեթանոսաց  
 և հերձուճածողաց. և կամ գիւրանալով ես  
 'ի կրօնս նոցին, որք են հակառակ քսի  
 և հայհոյիչք անձուք նր. այլ և ներմուծու  
 նելով 'ի սիրտ իմ զհայհոյութի և զթերու  
 թի 'ի քս' յանձ, յեկեղեցի, և 'ի սք անձաճինն,  
 և յայլ անսքս. և 'ի սք խորհուրդս մար  
 մնոյ և արեան կենարարին, և կամ յայլ  
 խորհուրդս սք եկեղեցոյ. նախանձեցայ  
 ես ը աջողութիս այլոյ, 'ի մեծութիս, 'ի  
 հարստութիս, 'ի պօրութիս, 'ի գիտութիս,  
 յարհեստս, և յայլ սոյնպիսիս. իսկ յուս  
 նիլս զգիտութի և զարհեստ եղև առ ին  
 հպարտութե իմոյ. ուրախացայ անաջողու  
 թե այլոյ. տրտմեցայ վս պակասելոյ մար  
 մնաւոր ցանկութեցս, և վս մեռանելոյ  
 մարմնաւոր ազգականացս. նոտայ 'ի սուգ  
 տրտմութեան, և ոչ զգիտու մատուցի ա  
 բարչին իմոյ, այլ ցանկացայ մեծութե  
 հարստուք ոսկւոյ՝ արծաթոյ՝ հանդերձի  
 կերտուճածոյ. և այլ մարմնաւոր ստացունա  
 ծոյ. և փառաց աշխարհի մեղայնոյ.  
 Հոգւովս մեղուցեալ եմ. խորամանկութե  
 անզգամութե՝ յանդգնութե և երկչոտութե.

չըայլութբ և ժլատուբ գէխութբ և անի-  
րաւուբ, չարահաւանուբ, յուսահատութբ  
և թերամըտութբ. մեղայ այ.

Մտօքս մեղուցեալեմ, նենգութբ՝ ատե-  
լութբ՝ խեթիւ՝ մախանօք՝ յաչախանօք՝  
թուլութբ պոռնկական խորհրդովս,  
արուական՝ իգական՝ անսնական՝ գրաստա-  
կան՝ գազանական, իգիշերի և իտունընջեն  
երազական գիջութբ, և յանըջական գարշ  
ախտեղութբ. մեղայ այ.

Այլ և իմէջ եկեղէցւոյ, և ի ժամ աղօ-  
թից իմոյ՝ միտք իմ ոչ ուղղելով առ անձ, ի  
մայր նի, և առ ամ սբս նորին, միշտ հետ  
և ելով զբաղմանց Յի, և աշխատելով թե  
կամս չարին. և ոչ երբեք հոգւոյս հետեւ  
լով. այլ հանապազ զմարմնոյս չար կամքն  
կատարելով մեղայ այ.

Կամօքս մեղուցեալեմ, միշտ և հանապազ  
հեռնալով ի բարւոյն, կաման մերձեցայ ի  
կամս սատանային, և յամ չարիս, ի գողուի,  
ի պոռնկուի, ի սպանուի և յայլ ամ տեսա-  
կս չարուեց որք են հակառակ կամացն այ.  
Նաև՝ ձանձրացայ յաղօթս՝ ի պահս՝ ի ժա-  
մերգուիս՝ յողորմուիս, և յայլ ամ առա-  
քինուիս անձային. և ի գործս մարմնաւոր յու-  
սումնս

սուսն՝ յարհեստս՝ իբաղաբախն և՛ ի բարոյ  
 կան օգտակար տնտեսուհիս. և՛ ի տօնս տե  
 րունական յաւուրս կիւրակէից և՛ ի յիշ  
 տակս ամսրբոց ծուլացայ ընթանալ իս  
 եկեղեցին այ. ձանձրացայ գործել զբարի  
 որոց պարտական իսկ էի հետեիլ. իմել  
 եկեղեցւոյ և՛ ի ժամն աղօթից և յըն  
 թերցո՛ւածոց արարի դատարկախօսութի  
 որով և արգելի զայլս ՚ի ջերմեռանդու  
 ՚ի լսել զանուն տն մերոյ Յսի քի ոչ խոնար  
 հեցուցի զգլուխ իմ և ոչ երկիրպագի  
 անու՛նանորին. ոչ ետու զպէտս կարօտե  
 լոց և ոչ գնացի ՚ի տես հիւանդաց ոչ փր  
 կեցի զգերեալսն և ոչ թաղեցի զմարմնս  
 աղքատ մեռելոց ոչ խրատեցի զերկ  
 միտան և ոչ միսիթարեցի զտրտմեալսն ոչ  
 ուղղեցի զմեղուցեալսն և ոչ ասեց ՚ի զվատ  
 թարսն ոչ աղօթեցի վասն սիրելեաց իմոց  
 և թշնամեաց և ոչ վս ամենեցուն. փոխա  
 րէն շնորհեալ բարեացն այ և մարդկան  
 մոռացեալ հատուցի զչար. զաւուրս  
 տէրունական ոչ պահեցի. եղէ պատճա  
 այլոց ևս գործել. զի ոչ երբէք ընթացայ  
 է պատուհիրանաւն այ. մեղայ այ.  
 Մարմնոյ ցանկուքս մեղուցել եմ հեշտու

յոյ

ցայ կատարել խորհրդով՝ բանիւ և գործով  
 'ի գողութի 'ի սպանութի 'ի պոռնկութի և  
 'ի շուտի ցանկացայ լէ գեղ երեսայ այլոց  
 որով և խոտորեցաւ սիրտ իմ՝ ջեռաւ  
 մարմին իմ և զօրացաւ յիս տուփուսն չար  
 ցանկութե մեղայ իմոց. որ և գարչապէս  
 շօշափեցի զնս գիրկս առեալ Տամբուր-  
 մամբ խօսելով լէ նոսին զաղտեղի և զազ-  
 րալի բանս առ 'ի յորդորել զնս 'ի մեղս.  
 ուստի լկտի կերպարանօք և անպատշաճ  
 շաղաշարութբ խառնակեցայ լէ նոսին.  
 այլ և ընկզմեցայ լէ դէմ բնութեան 'ի մեղս  
 ստորով մէականին՝ լէ աշուճայ և լէ իզայ. լէ  
 հաւատայելոց և յանհաւատից. զի ոչ ար-  
 գարութբ անցի, և ոչ սրբութբ պահեցի  
 զաւուրս տէրունական տօնից կիւրակեցի  
 քառասնորդայ պահոցն և յիշատակս ամ  
 սբց այլ և անկանելով լէ երազական գի-  
 ջութբ 'ի գիշերի և 'ի տուն ջեան 'ի սբ և  
 յանսբ տեղիս յանցեայ լէ սաղմնանցութբ.  
 որով և բարկացուցի զած բարձրեալն ի  
 վր իմ. մեղայ այ:

Այլ և մեղուցել եմ եօթնեքին յանցնօք մա  
 հացու մեղօքն, հպարտութբ և մասամբք նո  
 րին նախնձու և մասամբք նորին. բարկութբ  
 և մասամբք նորին ծուլութբ և մասամբք նո-

րին. ագահութի՛ք և մասամբք նորին. Արկրա  
 մոլութի՛ք և մասամբք նորին. Բըղջատն և  
 չար ցանկութի՛ք և մասամբք նորին. մեղայ այ  
 Այլ և մեղուցեալ եմ ամ յօդուածով  
 շինուածոյս և ամ անդամօք մարմնոյս եօթ-  
 նեքին զգայարանօքս. և վեցեքին շարժ-  
 մամբքս վերամբարձ ոտնահարութի՛ք և  
 վայրաքարչ մեղկութի՛ք յաջ և յահեակ  
 խոտորելով. առաջնոցն մեղանչելով. և  
 վերջնոցն չար նշանակ գողով. այլ և հն-  
 գեքին զգայութի՛ք աչօքս՝ ի չարն հայելով.  
 ականջօքս՝ լսելով. բերանովս՝ զվատթարս  
 խօսելով ընդամբս՝ ի չարսն հոտորելով  
 ձեռամբք և ոտիւքս՝ զըկելով և թ գործ  
 ածելով և առ չարն դիմելով մեղայ այ.  
 Այլ և մեղուցեալ եմ, ամ պատուիրանացն  
 այ, յանձնառելեացն և ՚ի հրաժարելեացն.  
 զի ո՛չ զյանձնառականն կատարեցիս և ո՛չ  
 ՚ի հրաժարելեացն հեռացայ. զօրէնս ա-  
 ուի՛ և յօրինացն հեղգացայ. ՚ի կարգօ-  
 քրիստոնէութի՛ն հրաւիրեցայ և գործովս  
 անարժան գտայ, գիտելով զամ չարիս  
 կամաւ կորացայ. և ՚ի գործոց բարեաց  
 ես ինձէն հեռացայ. վայ է ինձ վայ է ինձ.  
 վայ է ինձ. զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստ-  
 վանիմ. զի անթիւ եմ յանցանք իմ. անասել

են անօրէնութիւնք իմ. աններելի են ցաւք  
 իմ, և անբժ շկեւի վէրք իմ, մեղայ այ.  
 Ձի ՚ի ծննդենէ սուրբ աւագանին մինչև  
 ցայսօր, ըստ որում մարդ եմ սխալական  
 ՚ի մեղայ ծնեալ, և մշտապէս ՚ի մեղս շա-  
 ղախեալ. անձնի շխան կամօք գործեցի զամ  
 տեսակս չար մեղաց, թէ զմահացու և  
 կամ զներելի մեղս. և կամ զայսոսիկ ամ  
 որ խոստովան եղէ առաջի քո Տայր սբ,  
 զոմանս խորհրդով՝ զոմանս բանիւ՝ և  
 զոմանս գործով. և դիզեալ բարդեցի զնս  
 ՚ի վր իմ, և ես ~~կայ~~ լե ծանր լծով և լե  
 ծառայութիւնսնս.

Այլ գործեցի զանագան տեսակս մեղայ,  
 զորս ոչ ինչ համարեցի ինձ մեղս, և ոչ պա-  
 հեցի ՚իմտի իմումս, զի թէ այժմ խոստո-  
 վան լինէի առաջի քո Տայր սբ. ուստի այս-  
 պիսի ամ մեղօք մեղուցել եմ, և ամ չարե-  
 օք լցեալ արդ՝ ստորջայեալ եմ ես յիմ չար  
 մեղացս և ՚ի չար գործոցս, մեղայ այ.  
 Տայր սբ զքեզ ունիմ միջնորդ հաշտուե  
 և բարեխօս առ միածին որդին այ, զի  
 ի շխանութիւն որ տուեալ է քեզ՝ ալ ձա-  
 կեսցես զիս ՚ի կապից մեղայ իմոց, աղաչեմ  
 զքեզ Տայր սբ թողութիւն շնորհեցես  
 զիս.



Աստի Տժի ուրեմութա, զո շարշարունայ փնան  
 Տերոյ Յոտ Բոտ. 'ի Եանն երեսնայ ուր ասէ: 2Է  
 ասէ՛՛ յոչԷն. աս. 12:

Հաւատեալ'ի Յարութի է Իսահակեան 'ի նոր շար  
 շայեցաոյ աշահոարեանց իոչէցելոյ, 'ի Գառն Տար  
 Տընայելոյ Եանին աս, Լ 'ի պարտ. Եօր նորա ասէ՛՛  
 նեալ արԷոյ իոտի նարիասա ասէ՛՛



ասաւոր և ասրսաիելի խոր  
 Տուրդ մեծի ուրբաթու պաւ  
 եքիս, Տողիսպատու՛՛ Տրա  
 շալլ

չալի և հրաշագարդ մարգարէն երեմիան  
 տեսեալ ՚ի հեռաստանէ հոգւոյ ակամբ.  
 վնյ սարսափմամբ և դողալով, հիացմամբ  
 և զարհուրելով. կական բարձել ՚ի դիմաց  
 մօր տն մերոյ սբյ կուսին մարիամու անձա-  
 ծին, ողբերգկան ձայնիւ գոչէ ասելով.  
 ”Չեզ ասեմ, ձեզ ասեմ, անյաւնորք ճանա-  
 սրարհայ, դարձարուք՝ հայեցարուք և  
 տեսէք, թէ իցեն երբէք զաւր և զսաւոյս  
 լեալ որ ՚ի վերայ իմ հասին:

Ո՛վ սարսափելի և զարհուրելի խորհուրդ  
 ուրբաթու գիշերի մեծի պատեքիս:

Ո՛վ սքանչելահրաշ և զարմանատեսակ  
 խորհուրդ հրաշալի աւուրս մեծի:

Ո՛վ ժամ սոսկալի և ժամանակ կսկծալի  
 և ողբալի:

Ո՛վ ամենաչքնաղ և գեղեցկատիպ հարսդ  
 հօրն երկնաւորի, բնակարան սբյ հոգւոյն  
 այ, և մայր անարատ միածնի բանին այ,  
 անձամայրդ մարիամ, զիա՛րդ կաս այսօր ՚ի  
 սուգ տրտմութե տրտի:

Ո՛վ խորհրդաւոր խորան, և իմանալի  
 տաճար երկնաւոր փեսային, և հոգեծին  
 մայրդ մեր սբ եկեղեցի, զիա՛րդ կաս այ-  
 սօր ՚ի սուգ տրտմութե մեծի. և ընդէ՛ր  
 քաղց

քաղցրանուճագ ձայն քո լռեցել տեսանի  
 Ուր են հրաշալի ձայնք օրհնութեցոյ որ  
 յերեկոյեան ժամուն ուրախութե Երգելիս  
 արդ՝ զիա՛րդ՝ի քաղցրանուճագ օրհնութե  
 Երգոյ դատարի: Ուր են ձայնք առաքե  
 լոյ և մարգարեից՝ զիա՛րդ լռեցան: Ուր  
 է գեղեցիկ պատմութեանդ լուսեղէն  
 զիա՛րդ խաճարեալ այսօր զգեցար իսուգ  
 տրտմութե: Ուր է ականակուռ և լուսե  
 ղէն պսակդ անման, է՛ր սեւազգեստեալ  
 նստիս այսօր իսուգ դառնութե:

Արդ՝ լուճարութե ձայնի սքե՛յ եկեղեցոյս  
 ով հաճատացեալք, թէ զինչ աղաղակե  
 և որպիսի բարառնութե Երգս յօրինէ, լայ  
 և ողբայ տրտմակից գոլով երկնա՛նոր  
 փեսային իւրոյ, գոչե և աղաղակե բանա  
 հիւսութես ասելով: տեսանեմ զի յերկինս  
 արեգակամբ և լուսնի՛ն և լուսափայլ աս  
 տեղօք զարդարեալ: եւ՛ երկիրս անբա  
 ռութե և վայելչութե լցեալ իսկ ստեղծօր  
 տր և արարիչ նոցին յարարածոցս անար  
 գեալ և ՚ի մահ իաչի դատապարտեալ  
 տեսանեմ արդ՝ եկեղեցիս ժողովրդով  
 հանդիսացեալ և հոգեծինս զաճակօր  
 լցեալ բայց Յս երկնա՛նոր փեսայն իմ: տր

և վարդապետն ձերն ՚ի ձէնջ ՚ի բայ հեռա-  
 ցեալ: Այլարդ՝ զհարդ Լայից, և զորպիսի  
 որբերգական երգս յօրինեցից այսօր ՚ի  
 միջի ձերում: Այլ հոգեծին որդեակք  
 իմ սիրելիք: յաւուր ծննդեան փեսային  
 իմոյ՝ հրեշտակ յերկնից իջեալ երգէին,  
 փառք ՚ի բարձունս այ: Այսօր անօրէն  
 ժողովն հրէից, աղաղակէ ՚ի խաջ հան  
 զդա: Յաւուր ծննդեան երկնաւոր փե-  
 սային իմոյ՝ Թագաւորք եկեալ երկրպա-  
 գութի մատուցանէին նմա: Այսօր ամենա  
 չարն հերովդէս, զնա ծաղր առնէ. և  
 անօրէնն պիղատոս, ՚ի վճիռ մահու դատա  
 պարտէ: Յաւուր գալստեան ծաղկա-  
 զարդին, ՚ի մտանել երկնաւոր փեսային  
 իմոյ յերուսաղէմ, մանկունք եբրայեցւոյ  
 ք առաջ ելեալ ձայնիւ երգէին նմա՝  
 ովսաննայ օրհնութի ՚ի բարձունս, օրհնեալ  
 որ գաս Թագաւորդ իսրայելի: Այսօր՝  
 անօրէն ազգն հրէից զտրն փառաց անար-  
 գանօք և չարչարանօք ամեն ՚ի գողգոթայ  
 ՚ի պատիժ. և ՚ի մահ խաջի: Արդ՝ որք յաւ-  
 ուր ծաղկազարդին զնա Թագաւոր կոչէին:  
 այսօր աղաղակեն չիք մեր Թագաւոր բայ  
 ՚ի կայսերէ:

Այլարդ տեսանեմ զի ամէնօրհնեալսք  
 անձաձինն մարիամ մայր փեսային իմոյ, մե-  
 ծաւ մորմոքմամբ լայ և ողբայ, ոչ ոք ոչ  
 զնա միսիթարեսցէ: տեսանեմ, զի տր և  
 փրկիչն աշխարհի, մատնի յանօրէն աշ-  
 կերտէն, ոչ ոք որ սաստեսցէ նմա:  
 Արդ՝ ով հոգեծին մայրդ մեր սք եկե-  
 ղեցի, դու որ այգ քան լաւ և ողբաս, այս  
 ամէնօրհնեալսք անձաձինն մարիամ յոր-  
 ժամ լուծիցէ, զչարչարոնս և զմահ միած-  
 նի որդւոյն իւրոյ Յսի քսի, ո թէ զիարդ  
 և ողբան անմիսիթար սրտիւ լայ և սուգ  
 տրտմութեան զգենու: վս զի, անետեօք  
 հրեշտակապետին գաբրիէլի զբանն ան-  
 յղացաւ: ինն ամսեայ ժամանակաւ կրեայ  
 զնա յիւրում արգանտի: կուսութք ծնաւ,  
 սրբութք անոյց, ի վր սք բազկայն գրկեայ  
 մաքուր սք կաթամբն զէմ մանուէլ զոր-  
 դին իւր միածին դիեցոյց, մանաւանդ զի  
 մի էր միածին անդրանիկ սքյ կուսին: Ը  
 երգոյ երգոյն սողովմոնի: "մի է աղանի իմ  
 կատարեալ: մի է մօր իւրոյ՝ ընտրեալ  
 ճնողին իւրոյ, վսյ արքայածինն սողովմոն  
 ի դիմայ տիրամօրն երգէ ասելով:  
 "Եւէք և տեսէք դստերք եհմի յարքայն  
 սողով

սողովմանի զպսակն որով պսակէց զնա մայր  
իւր յաւուր փեսայութե իւրոյ. և յաւուր  
ուրախուէ որտինն: Արդ՝ ով հաւատա  
ցեալք. և հոգեծին ծնունդք մօրս մերոյ սք  
եկեղեցւոյ, արդարեւ՝ լալ և ողբալ ար  
ժանէ, ո՛չ միայն՝ ի մահ միածնի որդւոյն  
այ. Այլ յաւետ ողբալ՝ ի մեղս մեր, ՝ զի վս  
մեր չարչարի, և վս մեր մեռանի, և նորին  
վիրօքն բժշկեցաք. ուր ասաց փրկիչն, "այլ  
լացեք ի վր անձանց ձերոց: Ձի բանք մեր  
ոչ են առ այլ սքան այ, և կամ առ այլ  
արարած ոք, այլ ՝ ի վր չարչարանաց և մա  
հուն որդւոյն այ, և արարչին անի, որ  
այսօր վս փրկութե օշխարհի, և վասն  
ապականեալ բնութես ադամեան, մարմնով  
բեւեռեցաւ ՝ ի քառաթե սք խաչին ՝  
բարձրաւանդակն գողգոթայ, ՝ ի տես համօ  
րէն օշխարհի, և անժողովրդեան:  
Քանզի զահաւոր և սարսափելի խոր  
հուրդ կամաւոր չարչարանաց և կենդա  
նարար մահուանն քսի այ մերոյ, կանխա  
գոյն տեռեալ հոգեկիրքն, քի նահապետքն  
և մարգարէքն, վս սքան չացեալ զար  
հուրեցան, և յիւրաքանչիւր ժամանակս  
բարբառեցին վս նր. տի՛նա՛ վս սարսա  
փելի

փեղի չարչարանաց և մահո՛ւնն նր ճառե-  
ցին, և անմխիթար ոգով լացին և ողբ-  
ցին, բայց հոգևով բերկրեցան և ցնծացան  
'ի փրկութիս իւրեանց:

"Նախ՝ չքնաղագեղն յաբէլ 'ի պատար-  
գիլն իւրում յեղբարասպան կայենէ  
նախահայրն մեր ադամ ետեռ հոգւոյ  
ակամբ զխորհուրդ սպանման անսեղին  
որդւոյն այ, յեղբարասպան ազգէն հրէից:  
Սոյնպէս այսօր միածին որդին այ, չքնաղա-  
տիպն Յն, երկրորդն յաբէլ որդիացեալն  
ադամայ սպանանի 'ի կայենասարս և յեղ-  
բարասպան ազգէն հրէից, որով և փրկ-  
կեաց և վերանորոգեաց ը մեղօք գրանել  
և ապականեալ բնութիս ադամեան:

"Երկրորդ՝ նահապետն նոյ յօրինմամբ տա-  
պանին ծանեալ զխորհուրդ փրկաւէտ խա-  
չին, որով և փրկեցաւ ազգ մարդկան 'ի հա-  
մաշխարհական մեղաց ջուրցն հեղեղատէ:  
Սոյնպ այսօր միածին որդին այ, կազմեաց ըզ-  
տապանն, քի զփրկագործ սք խաչն, և վերե-  
լակաւն իւրով ազրեցոյց յանդնդապտոյտ  
և 'ի խորասուզեալ բնութիս ադամեան:  
Երրորդ՝ հայրն հաւատոյ և նախկին նշա-  
ւակն աստուածաշտութեան նահապետն  
մեր

մեր աբրահամ ետես զխոյին կախմամբն՝ ի նոյն լեառն գողգոթայ զկախումն խոյին երկնաւորի, որով իսահակ փրկեցաւ յօրինակ բնութես մերոյ: Սոյնպէս այսօր գառն ւայ, բարձօղ մեղացն աշխարհի Յս բարերար փրկի չն մեր կախեցաւ՝ ի ծառոյն սաբեկայ, այսէ՝ ի քառաթև սբ խաչին, ի նոյն լեառն գողգոթայ, և մահո՛ւմբն իւրով արձակեաց զբնութիս ի կապանաց նախահօրն մերոյ առամայ:

"Չորորդ ՚ի նոսին շառաւիղն Յակովբ, որ իսրայէլ կոչեցաւ յայ, ՚ի նոյն տեղին ետես զտեսիլն ասեղ և զարմանալի. սանդուխք եղեալ՝ երկրէ յերկինս, և տր ՚ի վր նր հաստատեալ. որ նշանակէր զսբ խաչն, յորոյ վերայ պնտեցաւ տրն համայնից. զոր հիանալով ասաց, ասեղ իմն է տեղիս այս և զարմանալի: Սոյնպէս այսօր տանդուխքն յակոբայ՝ այսէ կենսատու սբ խաչն կանդնեցաւ՝ ի լեառն գողգոթայ. և տրն համայնից միածին որդին ւայ մարդայեալն էմմանուէլ բեեռեցաւ՝ ի վր նր. որով արար իսաղաղութի երկնաւորաց և երկրաւորաց, հեռաւորաց և մերձաւորաց, հրեղինաց և հողեղինաց:" և եբարձ ՚ի միջոյ

զկրճիմն ցանգոյն, և արար զերկոսեան  
 'իմի: Քանզի այսօր հրեշտակք յերկնից  
 իջել յերկիր 'իպաշտօն և յերկրպագութի  
 որդւոյն այ. և մարդիկք երկրէ յերկիրս  
 ելեալ, ոպ ասաց փրկիչն ցաւազակն յա-  
 ջակողմանս՝ այսօր է իս իցես 'ի դրախտին  
 Հինգերորդ՝ ժողովուրդն իսրայելացոյ  
 յանապատի անդ, մինչ հարկանէին 'ի թիւնա-  
 ճոր օձից հրամանաւ ան նախամարգարէն  
 մովսէս զօձ պղնձի բարձրացուցեալ 'ի վր  
 ձողոյն շանակի. ամ օձահարք մերձենալով  
 'ի նա բժշկէին 'ի վիրաց անտի: Սոյնպէս  
 այսօր օձն պղնձի, անթոյնն և անխարդախն  
 մարմնացեալ բանն ամ բարձրացաւ 'ի ձող  
 խաչին, և մահուամբն իւրով՝ բժշկեաց 'ի  
 թիւնից մահաբերին վիրաւորեալ և է  
 մեղօք գրաւեալ բնութիւնս ադամնան:  
 Այսօր՝ փրկիչն մեր պատառեաց խաչին  
 իւրով զծովն մեղաց. և հեղձել սատակեց  
 զիմանալին փարաւօն զվիշապն ապտամբ,  
 և զանօրէնութի նր իջոյց 'ի վր, գազաթան  
 նորին, և զանբիծ արեամբն իւրով՝ փրկեաց  
 զժողովուրդս իւր, վերացուցանելով զնս  
 'ի վերինն երուտաղէմ: Այսօր՝ ազատիչն  
 մեր պատառեաց զվէմն անապատին. քի զա-  
 նապատ

նապատացեալն ՚ի մեղաց զանձային զիւր  
 կողն. և կենդանարար արեամբն իւրով  
 արբոյց զպատքեալ և զծարաւեալ ժողո-  
 վուրդս իւր. այսօր՝ հաւն հաւալասան  
 բարձրացեալ և տարածեալ զթեւ իւր ըն-  
 կալեալ զմարդիկք ՚ի վրձ միջնողաց իւրոց,  
 և հան զնս յերկինս ՚ի ժողովս անդրանկաց  
 հատարելոց: Այսօր կեանքն երկնաւորաց  
 և երկրաւորաց մերձեցաւ ՚ի մահ, զի զմա-  
 հացեալքս վերածեցէ ՚ի կեանս: Այսօր  
 երկնաւոր խաղաղութին փեայցայաւ հե-  
 թանոսաց, և սրտկեաց զնս մայր իւր յերու-  
 սաղէմ, ոչ ահամբք պատուականօք, և կամ  
 ընդելուզեալ մարգարտովք այլ փշովք և  
 եղեգամբք. թքօք և կռփանօք, գանիւք և  
 հայհոյաւք, և ազգի ազգի նախատանօք.  
 զի զհարսնացեալսս՝ մուծցէ ՚ի հայրենի  
 փառս և ՚ի լուսեղէն առ ազատն: Այսօր՝  
 հովինն հոգևոր ել ՚ի խնդիր կորուսեալ  
 հօտին. տալով զանձն իւր փոխանակ բազ-  
 մաց, և եբարձ զվիրաւորեալն ՚ի վրձ ուսոց  
 իւրոց, խնդալով ամ յերկինս ՚ի փառսն  
 հայրենի. ասելով զօրացն երկնաւորաց,  
 ուրախ լերուք չէ իս, զի գտի զոչխարն իմ  
 կորուսեալ: Այսօր՝ զարմայան երկինք,  
 սարսե

ասրսեցան սերովբէք, տեսանելով զան  
 մարմնով եկեալ 'ի չարչարանս: Այսօր  
 անըմբռնելին ըմբռնի, արձակողն կապա-  
 նայ' կապի: Այսօր' փառաւորեալն 'ի  
 Տրեղինայ' անարգի 'ի Տրեկից' անպարսն  
 պարտաւորի: և անդատապարան' դատա-  
 պարտի: Այսօր' գառն այ' 'ի գոյցոյ խա-  
 ծատի, և ամենամեծն ամ' նո՛ւատացեալ  
 խոնարհի մարմնով 'ի չարչարանս, և 'ի  
 մահ խաչի: Այսօր' անտանջելին, տանջի և  
 անչարչարելին չարչարի: Այսօր' անմահն  
 զենանի, և կեանքն մարմնով մեռանի:  
 Եւ արդ' այսօր զայս ամ, և առաւել բն  
 զայս տեսեալ մարգարէիցն' սքանչայեալ  
 զարհուրեցան և յիւրաքան չիւր ժամանակս  
 բարբառեցին վս նր': Այ գրէ նախամար-  
 գարէն մովսէս ահագին ձայնիւ առ խառա-  
 սիրտ որդիսն իսրայելի ասելով "տեսանիցե՞ք  
 զկեանս ձեր կախեալ առաջի աչաց ձերոյ  
 և զարհուրեսցիք զցայգ և զցերեկ, և ո՞չ  
 հաւատասցիք կենաց ձերոյ: Նոյնպէս և  
 հայրն համբերութե կենդանի նահատակի  
 յոր ասէ, "մերձեցաւ 'ի մահ անձն նորա  
 և կեանք նր' 'ի դժոխս: դարձեալ թէ, "Ա  
 պատմեացէ յանդիման նր', զձանադարհ  
 նոր

նորա. և զոր ինչ ինքն գործեաց՝ ով հաս-  
 տուսցէ նմա. զի ինքն՝ ի գերեզմանս գնացա  
 ՚ի տապանի տըքնեցաւ. և բաղյրացան նմա  
 խիճք հեղեղատի: Եւ երջանիկն ՚ի ջոկս  
 մարգարէից, քնար երգուն դաւիթ, գոչէ  
 ՚ի դիմաց տն ասելով. "Ես ՚ի տանջանս  
 պատրաստեմ, և զաւրիմ յամ ժամ առաջի  
 իմ են: Եւ դարձեալ չարչարեցայ և խո-  
 նարհ եղէ յոյժ, զօրհանապազ տրտում  
 գնայի, զի անձն իմ լի եղև չարչարանօք:  
 "Եւ թէ ծակեցին զձեռս իմ և զոտս, և  
 թուէցին զամ մարմինս. բաժանելով զհան  
 դերձս իմ յիւրեանս, և առ պատմութեա-  
 նաւս վիճակք արկին: Սոյնպէ և իմաստնա-  
 ցեալն յայ սողովմոն, ներ շնչմամբ հոգ-  
 ւոյն, գրէ ՚ի դիմաց տիրասպան հրէիցն  
 ասելով. թէ, "մահու խայտառակութե  
 դատեսցուք, և անարգ մահունամբ սպան-  
 ցուք զնս:

Սոյնպէս և կայծակնամարտուն ետայիտա,  
 հրեղէն լեզուաւն յոյժ բարձրաձայն աղա  
 զակէ ասելով. "տէր ո՞ հաւատաց ՚ի լուր մեր,  
 և բազուկ տն ո՞ւմ յայտնեցաւ. ո՞չ գոյր նր  
 տեսիլ և ո՞չ վառք, այլ տեսիլ նր անարգ  
 նուազեալ քան զամ որդւոց մարդկան: Նա  
 ցմեղա

զմեղս մեր բառնայ, և վասն մեր չար-  
 չարի ի չարչարանս նր՝ համարեցաք իբրև  
 յայ՛ Նա վս մեր մեղաց վիրաւորեցաւ. և  
 վիրօք նորին բժ չկեցաք՝ տր մատնեաց զնա  
 առ մեղս մեր. և առ վշտին ո՛չ եբայ զբե-  
 րան իւր. իբրև զոչխար ի սպանդ վարեցաւ.  
 և առ աջի կտրչի անմուռն չ եկայ: Առ իս  
 նարհուէ նր՝ դատաստան նորին բարձաւ  
 և զազգատումն նր. ո՛ւ պատմեսցէ զի բառ-  
 նին յերկրէ կեանք նորա. վասն անօրէ-  
 նութե ժողովրդէն ի մահ վարեցաւ զի անօ-  
 րէնութի ինչ ոչ գործեաց, և ո՛չ գտաւ նեն-  
 գութի ի բերան նր: Ը անօրէնս համարե-  
 ցաւ, զմեղս բազմաց վերայոյց. և վասն  
 նոցին. ի մահ մատնեցաւ:

Սոյնպէս և մարգարէն երիմիաս գրէ ի  
 դիմաց տն ասելով. "տր ծանն ինձ և ծա-  
 նեայց. ես իբրև զգառն անմեղ ի սպանդ  
 վարեցայ: Սոյնպէս և մարգարէն ասելով.  
 վասն սոսկալի աւուրս գրէ ասելով. "Եւ  
 եղիցի յաւուր յայնմիկ մտցէ արեգակն ի  
 միջօրէի. և խաւարեացի լոյս ի սուռէ, և  
 դարձուցից ի սուգ զտօնս ձեր, և զան  
 երգս ձեր յողբա: Սոյնպէ և մարգարէն զո-  
 քարիաս. ասէ. "Եւ եկեսցէ հասցէ տե-  
 րանս:

ած, և եղիցի յաւուր յայնմիկ, ո՛չ ևս եղիցի  
լոյս, և ցուրտ և պարզ, եղիցի օր մի, և  
օրն այն յայտնի տն. յաւուր յայնմիկ բըղ-  
խեացէ ջուր կենդանի յերուսաղէմ:

Սոյնպէս յայտնապէս գրէ ամբակում:  
"տէր զլուր քո լուայ և երկեայ. հայեցայ  
ի գործս քո և զարհուրհեցայ. ի մէջ եր-  
կուց կենդանեաց ծանիցիս դու. ի մերձե-  
նալ ամացն յայտնեսցիս և ի հասանիլ ժա-  
մանակին երևեսցիս:

Այլարդ՝ կամեւով խօսիլ մեզ աստ զչար  
չարանայն քնի համառօտաբար, զորմէ  
գիտելի է: Առեալ Յնի զերկոտասանն,  
մուտ ի սէրնատունն առ ի ուտել զգառն  
զատկական: Նախ քան զընթրիսն խորհը-  
գոյ՝ եղ զհանդերձս իւր, ախածեալ  
զլենջակ իբրև զծառայ խոնարհել լուայ  
զոտս աչակերտայն. իսկ այն անօրէն յու-  
գային առաւել արտասու՛նօք, քան թէ ջրով  
լուայ զոտս նորին: Ա՛յլ բարեբար տը  
մեր յս քն, ո՛ր թէ ո՛րքան խոնարհեցար:  
Ա՛յլ ամենամաքուր և անձային սք ձեռք,  
տը և ստեղծող անի, որպէս խոնարհե-  
ցար լուանալ զոտս արարածոց և աղքատ  
ձկնորսաց, մանաւանդ այն անօրէն և նեն  
գաւոր

գաւոր յուդային, որ զկնի սակաւոյ  
 ունէր ընթանալ առ իմատնել Տրեկոյ զտր  
 և զածդ ամի լէ երեսուն արծաթի իսկ  
 անօրէնն այն տեսանելով այնքան սաստիկ  
 սէր և խոնարհութիւն քսի, ոչ սարջացաւ  
 և ոչ կակղացոյց զքարացեալ սիրտ իւր  
 դառնալ ՚ի չար ագահութիւն: Ով ծառայ  
 չար և նենգաւորդ յուդա: Ով անօրէ  
 ագահ մողորեալդ յիմարութբ. զինչ է  
 երեսուն արծաթն այն, որով մատնեցար ՚ե  
 կորուստն յաւիտենական: Ով անիծեալդ  
 չար և նենգաւոր մի թէ կարօտ էիր սակա  
 ինչ արծաթոյ, ոչ, էթէ ոչ ընկալեալ էիր  
 զդեռն ագահութե յանձին քում. որով և մատ  
 նեցեր զտր և զվարդապետն քո և զածն  
 ամի, լէ երեսուն արծաթի: Արդ զինչ  
 սասայից քեզ. ով գարշելի թշուառական  
 չար և մողիդ յուդա, լաւ էր թէ ոչ էիր  
 ծնել յաշխարհի, քան թէ ծնար և չոքար  
 զիւրովին ՚ի կորուստն յաւիտենական:

Աստանօր գիտելի է ով Տաւառացեալդ  
 զի յս բարերար փրկիչն մեր՝ նախ լուսայ է  
 Տին օրինաց և մեղացն զմեզս մեր, և այս  
 թէ սկսաւ բաշխել ցփրկագործ մարմն  
 և զարիւնն իւր սբ Տաւառացեալոցս. Յետ  
 լուս

լուանալոյ զուտս նոցին, էառ յն զՏառեր ձ  
 իւր և բազմեցաւ. մինչ դեռ ուտէին ասե  
 ցնս յն, միոմն ՚ի ջէնջ մատնելոյ է զիս,  
 և նոքա տրամեցան յոյժ. սկսան ասել ցտը՝  
 անցնիւր յորոց, մի թէ ես իցեմ տը, ասե  
 ցնս յն, այնէ որ ում թացից ես զպատառն  
 և տայ. թացեալ զպատառն ետ յուդայի  
 ըսկարիովատայւոյն. յայնժամ եմուտ ՚ի նա  
 սատանայ. Ասլա առեալ յնի Տայ, օրհնեց  
 եբեկ և ետ աշակերտայն ասելով. առէք  
 կերայք այսէ մարմին իմ. նոյնպէս առել  
 բաժակ գոՏայաւ. արբ, և ետ աշակեր  
 տայն ասելով, արբէք ՚ի սմանէ ամենեքին  
 այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ վն բազ  
 մայ հեղանի ՚ի թողութիւն մեղաց. Բայց  
 աւասիկ ձեռն մատն չի իմոյ ք իս ՚ի սեղանս  
 որդի մարդոյ երթայ ոն և գրեալ է, բայց  
 վայ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն որդի մար  
 դոյ մատնեացի. լաւ էր թէ չէր ծնեալ  
 մարդն այն յաշխարհի. Յայնժամ ասէ յն  
 յյուդայ, երթ զոր ինչ առնելոյ ես արն  
 լաղվակի և ել յուդա արտաքս վաղվա  
 ղակի և եր գիշեր.

Չկնի աւարտման ամենասք խորհրդոյ  
 պատարագին. ՚ի վերնատանն, առեալ յնի  
 զմետա

զմետաւանսն գնաց ՚ի լեառն ձիթենեաց  
 ասելով յաշակերտսն ամէն ասեմ ձեզ յայ  
 միկ գիշերի ամենեքին դուք գայթաղե  
 լոցեք յինէն, ուր գրեալ է. "Հարից զՏո  
 վիւն. և ցրուեացին ոչխարքն. Յայնժամ  
 ասէ ցտէր պետրոս, թէպէտ ամենեքի  
 գայթաղեսցին ՚ի քէն սակայն ես ոչ գայ  
 թագաղեսցայ:" զի քէզ պատրաստ իմ  
 բանտ և ՚իմահ. ասէ ցնա յն, "ամէն ասեմ  
 քեզ պետրէ՛ յայսմիկ գիշերի մինչև  
 իցէ հաւու խօսեալ երկիցս՝ դու երկու  
 ուրասցիս զիս:" Ապա առեալ ընդ իւ  
 յն զպետրոս զյակոբոս և զյովհաննէս  
 սկսաւ տրամիլ և հոգալ զի ուր սոք  
 զառաջինն անդ տեսին զփառս այլակեր  
 սութէնորա ՚ի լեառն թափօրականս յոյն  
 պէս պարտէր սոցա այսօր տեսնել  
 աստ զվիշտս և զտրամութիս նորին, զոր  
 կրելոց էր վն ազգի մարդկան, և վն վի  
 ղաւորեալ բնութիս ադամեան, եւ մատու  
 ցեալ յնի յառաջ ՚ի քարընկէց մի անկէ  
 ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր, եկաց  
 յաղօթս, և ասէ. աբբայ հայր ամինչ քեզ  
 հնարաւոր է, անցն զբաժակս յինէն բա  
 ոչ ուր ես կամիմ, այլ որպէս դու. Անկէ  
 յերկիր

յերկիր, առ ՚ի բառնալ զանէծս ՚ի նմանէ :  
 Անկաւ յերկիր, զի ընծայեսցէ զազգս  
 մարդկան հօրն երկնաւորին. անկաւ յեր-  
 կիր, զի բարձրէ զմեղս Տի. Աստանօր  
 պարտէ գիտել. թէ վն էր ՚ի պարտիզին  
 սղօթեաց տէրն, և ոչ ՚ի տաճարին. քանզի  
 նախկին ծնօղքն մեր ՚ի պարտիզի անդ գլո-  
 րեցան, ոյր վն և քն տէրն մեր ՚ի պարտիզի  
 անդ կամեցաւ. կանգնել զգլորեալսս : "Եւ  
 հոսէին քրտունքն ՚ի նմանէ իբրև զկայ-  
 լակս արեան, ուղ գրէ աւետարանի չն զու-  
 կաս. թէ երևեցաւ նմա հրեշտակ յերկ-  
 յից՝ և զօրացուցանէր զնա : Աստանօր  
 գիտելի է ով հաւատացեալք, թէ զինչ  
 էր երևումն հրեշտակին, և զինչ զօրա-  
 ցուցանելոյն զնա : Յայնժամ մատուցեալ  
 հրեշտակին հանդերձ բազմութիւն զօրաց  
 երկնաւորաց, ունելով զբաժակն ՚ի ձեռին.  
 անկեալ երկիրեագագ յսի, և ասէ :  
 Ով ստեղծօղ և տէր անդ անի. թէպէտ  
 ամինչ հնարաւոր է ամենազօր անուեղ,  
 սակայն արդարութի և իրաւունս հաստա-  
 տեալ է յաթողքո. ողորմա՛ս, որ ստեղ-  
 ձեր մի՛ կորուսաներ. զգործս ձեռացքոյ  
 մի՛ անտես առներ. արդարութի և իրա-  
 ւամբ

Ըամբ քով՝ մատիւր՝ առ բաժակս, զոր ես  
 քեզ հայր յարբումն. դու ես որ սահմանե-  
 ցեր զայս ամ. աղաչեմ՝ մի՛ անցանե-  
 զսահմանադրութե՛ք քով, աղաչեմ որդրման  
 տէր, հայեաց՛ի բաժակս, զոր առաքեաց  
 քեզ հայր քո, տեն զի ամ բազմութիւն  
 զօրացս երկնաւորաց՝ սպասեն քեզ. զ  
 արբցես զայս, տեն թէ որքան թշուառու  
 լցեալ է աշխարհ ամ. հայրն երկնաւոր  
 խռովեալ է յամ արարածոց իւրոց. և է  
 ամ դասաւորուիս հրեշտակաց. յայնմ ժա-  
 մանակէ. յորժամ բանսարկուն գտող եղև  
 ամ չարեաց. անկաւ սաստիկ որոտմամբ, և  
 տուտ նորա քարչեաց զերրորդ ման  
 մերոյս դասաւորութեան, և յայնմ օրէ  
 դարձոյց զերեսս իւր՛ի մէնջ. և եթէ դու  
 ոչ էիր օգնեալ մեզ, վաղու ևս կորու-  
 սեալ էաք, ոպ ծածկագիտիդ էսկէ յայտ  
 նի: Տեն եթէ անցցէ բաժակս զայս՝ զոր  
 առաքեաց քեզ հայր, դարձեալ ՚ի նոյն  
 մեղս անկանին արարածք. և վայրապար լին  
 մարմնանալ բանիդ այ: Ստեղծօր տէր  
 աղաչեմ անբ զբաժակդ. զոր ես քեզ  
 հայր՝ զցանկալին քո, զոր նախ քան զլի-  
 նին աշխարհի հաստատեցեր: Աստ  
 ամ

անդ անի, արի՛ անյաղթելի Տզօր Թագա-  
 շոր. տէր զօրութեց, և արբ զբաժակս,  
 զոր ետ քեզ Տայր, որով լինցի խաղաղութի,  
 ՚ի մէջ Տօր քո և մարդոյ. ՚ի մէջ Տրեշտա-  
 կաց և մարդկան, ՚ի մէջ մարդոյ և մարդ-  
 կան, արբ զբաժակս բարեգութ տր, որ  
 լի է խաղաղութբ. քանզի ամ արարածք  
 քեզ սպասեն, ուն թախանձանօք աղաչէին  
 մեծ մարգարէքն մովսէս և եղիայ ՚ի լեառն  
 Թափօրական. քանզի սպասեն բաժակիս  
 ամ Տոգիք, զի արբամբ սովին ազատեսցես  
 զամ գերեալն: Այլ արդ՛ արբ զսա, և  
 սովին դատեա՛ զերկիր անդնդոց, որ կլին  
 զամ մարգարէս, և զամ սուրբս. զի գու-  
 ժառանգեսցես զամ Տեթանոսս. ուն խոս-  
 տայալ քեզ Տայր քո, թէ՛ տայ քեզ զամ  
 Տեթանոսս ՚ի ժառանգութի քեզ: Արդ՛  
 այսպիսի աղերսանօք ամ բազմով զօրացն  
 երկնաւորաց թէ՛ Տրեշտակին այնորիկ շրջա-  
 պատեալ անկեալ յերկիր աղերս մատու-  
 ցանէին, և երկիրպագանելով նմա՛ յօժա-  
 բեցուցանէին զնա, զի արբցէ զբաժակն  
 Տաշտութե ընդդէմ նախնւոյն ադամայ,  
 որ արբեալէր զբաժակ բանաարկունին, որ  
 լի էր խառովութբ և թշամութբ, վշտութբ  
 և

և մահոճամբ. ուստի խուովեալ էր Տայր  
 քո բարեգութ, որով և ո՛չ խօսէր լատա-  
 ուապեալ ազգս մարդկան. մինչև ՚ի գալ  
 քո ՚ի յորդանան, ապա հաշտեցա՛ն ասելով  
 դա՛ն է որդի իմ սիրելի, դա՛ն է որ առնէ  
 խաղաղութի՛ն յերկինս և յերկրի. դա՛ն է որ  
 զմիջնորմն ցանկոյն քակեաց. դա՛ն է ժառան-  
 գութիս հօրս արբամբ բաժակին. Այս-  
 պիսի աղերսանօք աղաչէին նմա իմ հրեշ-  
 տակք այ՛, զօրացուցանելով զնա. Եւ կանխա-  
 ճառ բանին մովսէսի. "Թէ զօրացուցեն  
 զնա իմ հրեշտակք այ՛: Յայնժամ խոնար-  
 հեցա՛ն տրն մեր, ընդունելով զաղերսանս  
 երկնային զօրաց, որ ՚ի կողմանէ վիրաւո-  
 ղեալ բնութես աղաչէին նմա վս՛ արբամն  
 բաժակին չարչարանաց: Որով և եբարձ-  
 յս՛ ՚ի վերայ ուսոց իւրոց զճանրութի՛ն մեղաց  
 մարդկան, անկեալ առաջի հօրն երկնա-  
 չորի ասելով, հայր իմ, ահա ճանրութի՛ն  
 մեղաց մարդկան բարձեալ ունիմ ՚ի յուս  
 իմ, անկեալ կամ առաջի քո, ունի և կամիս  
 արբից զբաժակս զայս չարչարանաց, տա-  
 ղածելով ՚ի խաչինս մեռայց վս՛ փրկութի՛ն  
 մարդկան, միայն թէ զայսոսիկ մեղք մարդ-  
 կան զնչնը սրբեպետս ՚ի մարդկային ազգէ  
 Զորմէ

Չորմէ գրէ որբազան առաքեալն պողոս  
 Թէ յորժամ հնազանդեսցի նմա ամ, յայն-  
 ժամ և ինքն որդի հնազանդեսցի այնմ, որ  
 հնազանդեսցոյց նմա զամ, զի եղիցի ամ ամ,  
 յամենայնի:

Յետ աւարտման աղօթիցն ձայն ետ աչա-  
 կերտաց իւրոց ասելով, արիք որդեակք իմ,  
 բաւականէ որբան ննջեցիք, եկայք և  
 առէք զվերջին օրհնութի իմ, զի յուրա  
 ընկերն ձեր, ոչ թողու զձեզ հանգչիլ  
 աստ, արիք և տեսէք թէ անմեղ գառնա,  
 ուն անկանիմ ՚ի բերանս անողորմ գայլոց,  
 ձայն տուեալ համբուրելով զնն ուրոյն,  
 և ապա ՚ի բաց եկաց ՚ի նոցանէ, ետես զի  
 գային գունդ զօրացն, և յուրա ուղղեորիչ  
 նոցին, եւ լէ առաջ յուրայի մատն չին  
 իւրոյ, յայնժամ չոգաւ յառաջ անօրէնն  
 այն, անկեալ ՚ի գիրկըս համբուրեաց լրբա-  
 բար զամային սք երեսն յսի, յորմէ սերով-  
 բէք սարսէին մերձենալ ՚ի նա, և ասէ  
 ողջ եր վարդապետ յայնժամ ասէ յս յու-  
 դա, ընկէր վս ո՛յր եկիր, համբուրելով  
 մատնես զորդին ամ, Մինչև ցայժմ ըն-  
 կեր էիր հրեշտակաց, արդ՛ ընդէ՛ր եղեր  
 ընկեր սաստանայի, մինչև ցայժմ էիր առա-  
 քեալ

քեալ, արդ՝ ընդէր դարձար յարբանեկոյ  
 սատնայի. անուռնդ էր յուրայ որ թարգմանի  
 գալ 'ի խոստովանութի, ընդէ՞ր այժմ եկի՞ր  
 մատնութի: Յայնժամ գուռնդ զօրայն և սպա  
 սաւորք քահանայապետիցն ձեռն արկեալ  
 կալան զյն զանմեղ գառն և կապեցին  
 յայնժամ ոմն 'ի ծառայից քահանայապետի  
 մաղքոս անուճամբ զոր յառաջագոյն յանդոս  
 մալուծութի բժշկեալ էր տրն 'ի սաճարին.  
 մոռանալով զերախտիս նորին, ած ապտակ  
 յերեսս յսի, տեսանելով առաքելոյն  
 պետրոսի՝ չհանդուրժեալ զանզգամութի  
 ապերախտին՝ եհար սրով և 'ի բաց հան  
 զականջ նորին, ասէ զնա տր, դարձս զսուր  
 քո, զի պարտէ ընանիլ գրոց, և մատուցել  
 բժշկեաց զուսկն նորին. ո՞հ աւճաղ հոգւոյ  
 մերոց, ո՞վ հաւատացեալք, ո՞վ կարէ  
 պատմել՝ և կամ չէ գրչաւ արկանել զան  
 անցս չարչարանաց փրկչին մերոյ յսի քսի:  
 Չոր կրեաց վս մեր ո՞ թէ զիա՞րդ գազան  
 բար արձակեցան 'ի վր անմեղ գառնին նր  
 և սկսան պատառոտել զսք և զանձայինն  
 մարմին նր, ոմանք ապտակէին զսք երեսն  
 ոմանք պիղծ բերանով թքնութիւն չէ սուրբ  
 դէման, ոմանք փետտակէին զոսկէթել սք  
 մօրուս

Թորոսն, և ոմանք կապէին զՏրաշագործ  
 սք ձեռան, այնքան խառագոյն, մինչ զի ՚ի  
 մատանց և ՚ի յընդանց տն կաթէին արիւն  
 յորդառատ ուռոգանելով զերկիր: Ըստ  
 երգոց երգոյն սողոմոնի. "Թէ ձեռք իմ  
 կաթեցուցին զմուռս, և մատունք իմ լցան  
 զմռսով. զայստսիկ տեսեալ աշակերտացն,  
 Թողին զնա և փախեան: Ածին զինունորքն  
 զյն կապեալ նախ առ աննայ, որ էր աներ  
 կայիախայ քահանայայեանն, ապա առաքէց  
 աննայ զյն կապեալ առ կայիախայ քահա-  
 նայապետ, սն էր քահանայապետ տարւոյն,  
 զոր խրատն ետ հրէից. "Թէ լա՛ն է առն  
 միոյ մեռանիլ ՚ի վր ժողովրդեան, և մի  
 նմ ազգս կորիցէ: Եւ երթային զհետ  
 յնի պետրոս և յովհաննէս բացագոյն,  
 մտել ՚իներքս ՚իգաւիթ քահանայապետին,  
 աղջիկն որ դռնապաննէր՝ ասէ պպետրոս,  
 մի՞ թէ և դու յաշակերտաց առն իցես, և  
 նա ասէ ո՛չ եմ. նոյնպէս և երկիցս ծա-  
 ռայքն հարցին զնա ուրացա՛ն նա և ասէ՝  
 չեմ ՚ի նոյանէ. վաղվաղակի հա՛ն խօսե-  
 ցաւ. դարձա՛ն տր և հայեցա՛ն ՚ի պետրոս,  
 յիշեաց պետրոս զբանն յնի, վաղվաղակի  
 ել նա արտաքս՝ և ելաց դռնապէս:

Այլ արդ՝ ուր է այն մեծ հաւատարմութի  
 քո, ո՞վ գլխաւորդ պատուական, վե՛մբ  
 անուանել պետրոս. զոր ասէիր պատրաստ  
 եմ լէ քեզ երթալ 'ի բանտ և 'ի մահ, զի  
 եղև քեզ, ո՞վ երանելի սրբազանդ մեծ,  
 և անշարժելի վե՛մբ պատուական, զի արդ  
 դրդունեցար յաղջկանէն, ու բանալով զարն  
 քո և զանձն անի: Ո՞վ երանելիդ պետրէ,  
 զի արդ այդքան հեռագոյն շրջիս, փո  
 թայի՛ր և ել լէ առաջ յնի, և սակաւ ինչ  
 մխիթարեան զնա, և տես թէ որքան և  
 զի արդ կայ 'ի մէջ մեծի տրտմութեան և  
 չարչարանայ, և որպիսի դառն տանջանայ:  
 Յայնժամ զինչ արդեօք, և կամ որպիսի  
 բանասիւսութե՛ք երգս յօրինէր 'ի սրտի իւ  
 րում, երանելին պետրոս, յայտնի՛ է ամե  
 նեցուն: "Ձի լայր դառնապէս, ուր գրէ  
 անետարանիչն մատթէոս. և ասէր այսպս  
 Ձինչ արարից տէր և անդ իմ յն քնորով  
 գտանել զթողութի՛ յանցանայ իմոց, ելել  
 արտաքս անկեալ յերկիր լայր և ողբայր,  
 բախէր զկուրծս, փետտէր զհերս ասե  
 լով, վայ ինձ, զոր դաւանեցայ այ որդի  
 այսօր զնա ուրացայ, վայ եղկեւոյս, զինչ  
 արարից, որով և ընկալայ ինձ զյոյս  
 մխիթա

Ասիթարութի: վայ տառապելոյ անձինս  
 ուրացողի, զիւրդ ուրացայ զանն անի, և  
 զիրկինն աշխարհի: Այլ արդ՝ առ ուլ  
 դիմեցից և առ ո՛ աղաչեցից, առ ՚ի գտա-  
 նել զթողութի յանցանայ իմոյ: խոնարհե-  
 ցուցանէր զերեսս իւր յերկիր՝ լայր և ող-  
 բայր ասելով, վայ ինձ, զինչ պատասխանի  
 տայ ես եղբարց իմոյ: և կամ ո՛րպէս հայե-  
 պայց ՚ի լուսադայլ սք երեսն մարիամու  
 անձանի մօր տն իմոյ: և կամ զիւրդ ասա-  
 ցից ցնա թէ՛ թարց մեծի ինչ պատճառնայ  
 ուրացայ զորդին քո միածին, և զանն անի:

Յաւէտ ևս պարտիմք մեք օրինակ ունելով  
 մեզ զնա ինքն զվէմն պատուական զերանե-  
 լին զպետրոս, որով՝ և ՚ի ձեռն զղջման և  
 ապաշխարուէ նորին, գտանել մեզ զ յոյս  
 թողութի յանցանայ մերոյ:

Իսկ յորժամ անին զ յս ՚ի տուն քահանայա-  
 վետին հարցանէր զնա վն աշակերտայն, և  
 վն վարդապետուէ նորին: պատասխանել  
 յսի՝ ես յայտնապէս խօսեցայ յձի, և ՚ի  
 տաճարի անդ: հարց ցայնոսիկ ոյք լուանն:

յայնժամ քահանայապետն և անձ ատեանն;  
 ինդրէին սուտ վկայս վն յսի՝ և ոչ գտա-  
 նէին: մատեան ապա երկու սուտ վկայք

ասելով թէ՛ լուճաք զի սա ասէր, քակեց  
 ես զտաճարն այ, և զերիս աւուրս շինե  
 ցից զայն. ասէ քահանայապետն ցյս՝ շտա  
 ինչ պատասխանի յս լուռ կայր դարձե  
 կրկին է հարց քահանայապետն զ յս աս  
 լով՝ երդմնեցուցանեմ զքեզ յս՝ կենդ  
 նին, եթէ դու ես քնն որդի այ օրհնեց  
 ասա մեզ զ ճշմարիտն: Պատասխանել յս  
 դու ասացեր. բայց ասեմ ձեզ, տեսանիցե  
 յայսմ՝ հետէ զորդի մարդոյ նստեալ  
 աջմէ զօրուէ, և եկեալ լէ անպս երկնից  
 Յայնժամ պատառեալ քահանայապետ  
 զհանդերձս իւր, որով և պարտի իմանա  
 զպատառումն կարգի և քահանայութեան  
 ստոճերական օրինացն. ասէ քահանայն  
 և ս պիտոյ էն մեզ վկայս, արդ՝ լուճաք մե  
 զէն զհայհոյութի դորա. զինչ հաճոյ  
 մեզ, ասելով նոցին թէ մահապարտ  
 Յայնժամ սկսան ամբին թքանել յերե  
 Յսի, ոմանք կուփէին, և ոմանք ապտակէ  
 ծածկելով զերեսս նր, և ասէին. ասմար  
 դիճահար և ՚ի պողունկութէ ծնեալ սո  
 քս, և սուտ մարգարէ, մարգարէ  
 մեզ՝ ո՞վ է որ եհարն զքեզ: Ո՞վ հիանա  
 իտնար հուէ, Ո՞վ զարմանալի համբերու

ով գովելի հրեշտակաց, և սարսափելի  
 մարդկան, որպէս թքեցար՝ և ուն անարգե-  
 ցար. քայքայեալ կործանեցի տունն կայիա-  
 փայ, որ ոչ ծանեալ զփրկիչն աշխարհի,  
 և զԱճն ամի: Յայնժամ ետ քահանայա-  
 պետն զՅս'ի ձեռս զինուորաց զի չարչա-  
 րեսցեն զնա մինչև ցառաւօտն: Աւա՛ղ  
 հոգւոյ մերոց՝ ով հաւատացեալք. թէ  
 որքան անարգանօք չարչարեցին զտի՛ն մեր  
 Յս ք.ս. ով կարէ պատմել զանպատմելին  
 և իբրև այգ եղև խորհուրդ արարեալ  
 ձերոց և քահանայից, վս սպանման Յսի  
 սծին զնա՛ի վանաց կայիափայ յապարանս  
 զիղատոսի դատաւորին: Եւ էր այգուց  
 մատնեցին զՅս'ի ձեռս նր: Յայնժամ տե-  
 սեալ անօրէնն յուդա, որ զուր մատնեաց  
 զՅս՝ պարտաւորել զղջացաւ, և դարձոյց  
 զարծաթսն առ քահանայապետն ասելով,  
 մեղայ զի մատնեցի զարիւն զարդար, յուսա-  
 հատեալ ՚ի թողութի մեղաց, ՚ի խեղդ ան-  
 կեալ չոգաւ զիւրովին. որով և կորեաւ  
 իսկ ՚ի յաւիտենական կորուստն: Առեալ  
 զարծաթն քահանայից, ասեն՝ ոչ է արժան  
 ունել զայդ ՚ի կորբան. զի են գինք արեան.  
 Կը վս գնեցին նովաւ զագարագն բրտի-  
 ՚ի

'ի գերեզման օտարաց, ուն գրէ մարգարէն  
 "Առել զերեսուն արծաթին զգինս վաճա-  
 ռելոյն, զոր առին յորդուոյն իսրայէլի:  
 Այլ յորժամ եկաց Յս առաջի պիղա-  
 տոսի դատաւորին, սկսան ծերք և քահա-  
 նայք լէ ժողովրդովքն չարախօսել զՅս  
 ասելով, թիւրէ զազգս, և արգելու տալ  
 զհարկս կայսեր, և ասէ զանձնէն, թէ է  
 Քսն օժեալ թագաւոր հրէից, Եհարց  
 զնա պիղատոս դու ես թագաւորն հրէից:  
 Ասէ ցնա Յս՝ դու ասացեր: Յայնժամ  
 առաւել և սչարախօսել պնդէին զմանէ  
 հրէայքն ասելով, թէ խռովէ զժողո-  
 վուրդս, ուսուցանելով լէ ամ հրէաստան,  
 սկսեալ 'ի գալիլիէ մինչև ցայս, և Յս  
 լուռ կայր: Յորժամ լուաւ պիղատոս  
 զՅս, թէ գալիլիացի է այրն՝ յիշխանուէ  
 հերովդի, առաքեաց զնա առ հերովդէս,  
 տեսեալ զՅս հերովդի, հարցանէր զնա  
 բազում բանիւք և Յս պատասխանի ինչ ոչ  
 ետ նմա: Յայնժամ հերովդէս և սարհա-  
 մարհեաց զՅս հանդերձ զօրականօքն,  
 այպն արարեալ, արկ զնովաւ սպիտակ  
 հանդերձս, և դարձոյց զնա անդրէն առ  
 պիղատոս, որով և եղէն բարեկամք նք լէ  
 մի

միմեանս, զի յառաջագոյն թշնամիք էին  
 միմեանց: ուր լն կորստեան մարդկան՝  
 դեք միաբանին, սոյնպէս այսօր լն սպան-  
 ման Յսի չարքս միաբանեցան, զի ՚իբայ  
 սենեկ զտր և զփրկիչն ամ Ծի: Յայնժամ  
 կոչեաց պիղատոս զքահանայապետս և  
 զիշխանս Տրեից, ասելով զնս, ածիք մա-  
 տուցիք ինձ զայրս զայս իբր զխուովե-  
 ցուցիչ, արդ՝ դատեցի առաջի ձեր, ես  
 վնաս ինչ մահու ոչ գտի ՚իսմա: նոյնպէս  
 և Տերովդէս: Արդ՝ կամիք զի խրատեցից  
 զդա և արձակեցից: Յայնժամ աղաղակել  
 ամ բազմութիւն ասելով, բօրձ զդա, բօրձ  
 զդա, եթէ արձակեսցես զդա չես բարե-  
 կամ կայսեր, ասէ պիղատոս ես պատճառ  
 վնասու ինչ ոչ գտանեմ ՚իսմա: Բայց սովո-  
 թութիւն ձեր, զի զմի ոք արձակել ձեզ  
 ՚իտօմիս: Արդ՝ կամիք զի արձակեցից  
 ձեզ զՅս զարքայն Տրեից: Աղաղակեալ  
 ամենեցուն, մի՛ զդա, այլ զբարաբբայն,  
 զի էր բարաբբայն այն աւագակ: Քանզի  
 գիտաց պիղատոս, թէ առ նախանձու մատ-  
 նեցին զյիսուս: Մինչ դեռ նստէր յա-  
 տինին, առաքեաց առ նա կին իւր ասելով  
 զի այ ինչ քո և առն արդարոյն այնօրիկ, զի  
 բազում

բազում անցք անցին ընդիս այսօր յանուրջն  
վս նր: Յայնժամ երիցս ասէ պիղատոս  
յհրէայան ես մնառ ինչ մահու ոչ գտի ի  
ամա արդ՝ զո՛ կամիք արձակեցից ձեզ  
յերկուց աստի: դարձեալ աղաղակեն ամե,  
նեքեան զբարաբբայն: ասէ պիղատոս, զի  
արարից զՅս զանունն էլն Քս, ասեն զնա  
ամենեքեան խաչեսցի: տեսեալ պիղատոսի  
թէ ոչ ինչ օգնէ, այլ առաւել ևս խռո-  
վութի լինի, առեալ ջուր լուաց զձեռս  
իւր առաջի ամենեցուն ասելով՝ քանէլեմ  
ես յարենէ առնդ արդարոյդ այդորիկի  
դուք գիտեք, պատասխանեալ ամ ժողովո-  
ղեանն ասելով՝ արիւն դորա՛ ի վր մեր, և  
՛ի վր որդւոց մերոց: Յայնժամ աս պիղա-  
տոս արտաքս զՅս, կամելով հաճել  
զմիտս նոցին, նոտաւ ՛ի վր բեմին երուր-  
բաթն զատկի, ժամ երբ վեց երորոդ առա-  
ւօտուն, արձակեաց նց զբարաբբայն, և  
գան հարեալ զՅս, ետ՛ի ձեռս նց զի՛ն  
խաչ ելանիցէ: Առին զինունորքն զՅս,  
տարեալ ՛ի ներքս ՛ի գաւիթն՝ ուր հրա-  
պարակն էր, կոչեցին միանգամայն զամ  
գունդն, մերկացուցանելով զՅս, ար-  
կին զնովաւ քղամիտ կարմիր, և ծիրանի  
իբրև

Իբրև զզգեստ արքայական, բողոքել պատկ  
 'ի փշոյ եդին 'ի գլուխ նր, կատակէին  
 զնա ասելով, ողջ եր Թագաւորդ Տրեկց,  
 ծեծէին զգլուխն եղեգամբ, և Թքանէին  
 լէ երեան, կապելով զնա մերկ 'ի վր քա-  
 ղեղէն սեան մի, և յարեան 'ի վր նր ան-  
 ողորմ զինուորքն, ունելով 'ի ձեռս իւ-  
 ղեանց փշալի գաւազան երկաթայ գանիչ  
 և խարազնեայ չուան, սկսան փոխ առ-  
 փոխ ձաղել զտրն մեր Յս Բս. ով  
 արեան արբու գազանք, ով անողորմ և  
 քարասիրտ ազգ նայեցարուք և տեսէք 'իսք  
 մարմնոյ տն Յսին, ոչ ևս տեսանի այլ  
 առ ողջ ինչ տեղի, դեռ ևս ոչ դագարիք,  
 և ոչ զովանայք 'ի ձաղելոյ և յապտակե-  
 լոյ զտէր և զանձն անի: Ով զարմանալի  
